ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«16» «սեպտեմբեր» 2021 թ. № 126-Հ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N 449-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N745-Լ որոշման 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի նոյեմբերի 24-ի «Շրջակա միջավայրի նախարարության գործավարության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2017 թվականի հուլիսի 13-ի N225-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 449-Ա հրամանի հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր XI-րդ գլխով.

«XI. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՄԱՄԲ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՆՇԱՆՈՎ ՈՒ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՄԲ ԿՆԻՔՆԵՐՈՎ, ԴՐՈՇՄԱԿՆԻՔՈՎ ԿՆՔՄՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

134. Շրջակա միջավայրի նախարարության անվանմամբ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կլոր կնիքով կնքվում են շրջակա միջավայրի նախարարի, նախարարի տեղակալների և գլխավոր քարտուղարի կողմից ստորագրվող փաստաթղթերը, այդ թվում ստորագրված ֆինանսական փաստաթղթերը:

135.Շրջակա միջավայրի նախարարության անվանմամբ և Հայաստանի Հանրապետության զինանշանով կլոր կնիքը պահվում է շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի մոտ:

136. Շրջակա միջավայրի նախարարության քարտուղարության անվամբ կլոր կնիքով վավերացվում են նախարարության աշխատակիցների ստորագրությունները, կնքվում են առաքվող ծրարները:

137.Շրջակա միջավայրի նախարարության քարտուղարության անվամբ կլոր կնիքը և մուտքագրվող գրությունների համար նախատեսված դրոշմակնիքը պահվում են շրջակա միջավայրի նախարարության քարտուղարության պետի մոտ:

138.Շրջակա միջավայրի նախարարության անվանմամբ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կլոր կնիքի և շրջակա միջավայրի նախարարության քարտուղարության անվամբ կլոր կնիքի ու դրոշմակնիքի պատասխանատու պաշտոնատար անձի բացակայության դեպքում դրանք հանձնում է իրեն փոխարինող անձին:»:

ՆԱԽԱՐԱՐ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

4/16/2021

X

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

«16» ապրիլ 2021թ.
ք. Երևան